ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԹԻՎ 2 ԴԱՏԱԿԱՆ ԿԱԶՄ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

## ԱՆՀԱՏԱԿԱՆ ԴԻՄՈՒՄՈՎ ԳՈՐԾԻ ՔՆՆՈՒԹՅՈՒՆԸ ՄԵՐԺԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Քաղ. Երեւան 21 հունվարի 2010թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի
թիվ 2 դատական կազմը՝

Նախագահությամբ՝ Մ. Թոփուզյանի
Անդամակցությամբ՝ Հ. Դանիելյանի
Հ. Նազարյանի

Ուսումնասիրելով Հայկ Հարությունյանի եւ Վարդուհի Աբրահամյանի դիմումով
գործը քննության ընդունելու մասին հարցը,

### ՊԱՐԶԵՑ.

Համաձայն ՀՀ Սահմանադրության 101-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի՝ Հայկ Հարությունյանը եւ Վարդուհի Աբրահամյանը 13.01.2010թ. դիմել են ՀՀ սահմանադրական դատարան՝ խնդրելով քննության առնել եւ որոշել ՀՀ քաղա-քացիական դատավարության օրենսգրքի 231-րդ հոդվածի առաջին մասի 4-րդ կետի, 233-րդ հոդվածի առաջին մասի 1-ին կետի, 234-րդ հոդվածի առաջին մասի համա-պատասխանությունը ՀՀ Սահմանադրությանը:

Տվյալ անհատական դիմումի նախնական ուսումնասիրության արդյունքում բացահայտվեց, որ դիմումում նշված եւ դատական ակտով կիրառված ՀՀ քաղ. դատ. օր.-ի դրույթների սահմանադրականության հանգամանքը մինչ այդ քննության

առարկա է դարձել ՀՀ սահմանադրական դատարանում եւ ընդունվել են 2007թ. ապրիլի 9-ի թիվ ՍԴՈ-690, 2008թ. մայիսի 27-ի թիվ ՍԴՈ-754 եւ 2008թ. հոկտեմբերի 8-ի թիվ ՍԴՈ-765 որոշումները:

Այսպիսով, դիմումում առաջադրված հարցերի վերաբերյալ առկա են ՀՀ սահմանադրական դատարանի հիշատակված որոշումները, իսկ նմանօրինակ պայմաններում բացակայում են գործը քննության ընդունելու օրենքով սահմանված հիմքերը, ուստի անհրաժեշտ է գործի քննությունը մերժել:

Ելնելով վերոգրյալից եւ ղեկավարվելով «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի 3-րդ կետով, ՀՀ սահմանադրական դատարանի կանոնակարգի 26-րդ հոդվածով՝ ՀՀ սահմանադրական դատարանի թիվ 2 դատական կազմը

**ՈՐՈՇԵՑ.**

Հայկ Հարությունյանի եւ Վարդուհի Աբրահամյանի դիմումով գործի քննությունը մերժել:

Նախագահող՝

Անդամներ՝

21 հունվարի 2010 թվականի
ՍԴԴԿՈ/2-2